

ՀՈՒՑԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության և Ռուսաստանի
Գաշնության Կրասնոդարի երկրամասի Սոչի քաղաքի միջև
կրթության և գիտության ոլորտում բարեկամական հարաբերությունների և
համագործակցության ամրապնդման մտադրությունների մասին

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը՝ ի դեմս
նախարար Ս.Ս. Երիցյանի և Սոչի քաղաքի Վարչակազմը՝ ի դեմս փոխքաղաքապետ
Եվ.Ա.Կովալյովի, բարեկամական հարաբերությունների ամրապնդման և կրթության ու
գիտության ոլորտում կապերի ընդլայնման նպատակով մտաւիր են.

- Չարգացնել համագործակցությունը ժամանակակից կրթական քաղաքականության
ձևավորման ոլորտում՝ հիմնվելով հանդուրժողակամության և կողմերի փոխադարձ
վստահության սկզբունքների վրա
- Ակտիվացնել տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործման
հնարավորությունները կրթական գործընթացում
- Ընդլայնել կրթամշակութային ռեսուրսների փոխանակումը կրթության ոլորտում
համագործակցության տարբեր ուղղություններով
- Համատեղ իրականացնել տարատեսակ մշակութային միջոցառումներ և
տեղեկատվության փոխանակում ուսումնա-մեթոդական աշխատանքի և կրթության
բարեփոխման ոլորտում
- Աջակցություն ցուցաբերել մանկավարժական կադրերի որակավորման
բարձրացման և վերապատրաստման, նրանց մասնագիտական հմտությունների
զարգացման գործում,
- Աջակցել կողմերի փոխայցելություններին, ստաժավորման կազմակերպմանը,
առանձին մասնագիտությունների գծով ուսանողների պրակտիկաների անցկացմանը
- Համատեղ իրականացնել համալիր միջոցառումներ Հայաստանի Հանրապետության
դպրոցների շրջանավարտների Սոչիի պետական և մունիցիպալ կրթական
հաստատություններում նպատակային ընդունելության ապահովման համար
- Համատեղ իրականացնել համալիր միջոցառումներ Սոչիի էթնոմշակութային
բաղադրիչով դպրոցների շրջանավարտների Հայաստանի Հանրապետության
մասնագիտական կրթության հաստատություններում բյուջետային տեղերի
շրջանակներում ընդունելության համար
- Աջակցել համատեղ գիտահետազոտական աշխատանքներին և գիտելիքի տարբեր
ոլորտներում հետազոտություններին
- Աջակցել համատեղ միջոցառումների անցկացմանը, ինչպես նաև
ավագ դասարանցիների, երեխաների և երիտասարդության պրոֆիլային
ճամբարների կազմակերպմանը
- Սատարել համատեղ ծրագրերի, նախագծերի վերաբերյալ նախաձեռնություններին,
առանձին կրթական, այդ թվում՝ մասնագիտական կրթության հաստատությունների
միջև պայմանագրերի ստորագրմանը
- Նպաստել ռուսաց լեզվի և գրականության, ինչպես նաև հայոց լեզվի,
գրականության և այլ հայագիտական առարկաների դասագրքերի և ուսումնա-
մեթոդական գրականության փոխանակությանը
- Աջակցել երկու կողմերի համագործակցությանը օրենսդրության շրջանակներում:

Ս.ԵՐԻՑՅԱՆ

ԵՎ.Ա.ԿՈՎԱԼՅՈՎ



2006թ.

ք.Երևան

ПРОТОКОЛ

о намерениях между городом Сочи Краснодарского края Российской Федерации и Министерством образования и науки Республики Армения по укреплению дружественных отношений и сотрудничества в области образования и науки

Администрация города Сочи в лице заместителя главы города Сочи Е.А.Ковалева и Министерство образования и науки Республики Армения в лице министра С.С.Ерицяна, стремясь к расширению связей в сфере образования и науки в целях укрепления дружеских отношений, намерены:

- Развивать сотрудничество в области формирования современной образовательной политики, базирующейся на принципах толерантности и взаимного доверия сторон.
- Активизировать использование возможностей информационно-коммуникационных технологий в образовательном процессе.
- Расширять обмен культурно-образовательными ресурсами по различным направлениям сотрудничества в области образования.
- Проводить различные совместные культурные мероприятия, информационный обмен в сфере учебно-методической работы и в области реформирования образования.
- Оказывать содействие в области повышения квалификации и переподготовки педагогических кадров, развития их профессиональных навыков.
- Поддерживать взаимные визиты сторон, организацию стажировок, практики для студентов по отдельным специальностям.
- Реализовать комплекс совместных мер по обеспечению поступлений в порядке целевого набора выпускников школ Республики Армения в государственные и муниципальные образовательные учреждения г.Сочи.
- Осуществлять комплекс мер по квотированию бюджетных мест в учреждениях профессионального образования Республики Армения для выпускников школ с этнокультурным компонентом г.Сочи
- Поддерживать совместные научно-исследовательские разработки и исследования в различных областях знаний.
- Содействовать в проведении совместных мероприятий, смен профильных лагерей для старшеклассников, детей и молодежи.
- Поддерживать инициативы по разработке проектов, программ, заключению договоров между отдельными образовательными учреждениями, в т.ч. учреждениями профессионального образования.
- Способствовать обмену учебниками и учебно-методической литературой по русскому языку и литературе и по армянскому языку, литературе и другим арменоведческим дисциплинам.
- Содействовать в сотрудничестве в рамках законодательства обеих сторон.

Е.А. Ковалев



С.С.Ерицяна

" 17 " 04 2006 г.

г.Ереван